ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետություն Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնք

Գ. Նորակերտ 2 փող. 34 շենք հեռ. 094 01 21 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ թիվ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

10.06.2015 թ.

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 15 հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Գեղարքունիքի մարզի Նորակերտ համայնքի ավագանու 10.06.2015 թ-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ

1. Նորակերտ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը վարձակալությամբ տրամադրելու մրցույթի մասին:

/ զեկ. Գ. Սարգսյան – համ. Ղեկավար /

Լսեցին 1. Նորակերտ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը վարձակալությամբ տրամադրելու մրցույթի մասին Գ. Սարգսյանի առաջարկությունը:

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 76 հոդվածով , << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի առաջին մասի 5 –րդ կետով և հիմք ընդունելով Նորակերտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է:

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Նորակերտ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը վարձակալությամբ տրամադրել մրցութային կարգով:
2. Հաստատել վարձակալության տրամադրվող հողերը ըստ իրենց ծածկագրերի և հեկտարների, տարեկան վարձավճարի մեկնարկային գները, կանխավճարը և մուտքավճարը համաձայն հավելվածի.